

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Խիֆիլուսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

() տարաբաղադրակի գրվում են ուղղակի
Тифлисс. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և Ծննդ տօրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՈՍԱԿԳՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Թէև հայրենիքի շահերը պահանջում են
ամեն դէպքում պահպանել նրան օտարեն-
րի առաջ, բայց ինչպէս այդ անեմ, երբ
խղճահարկում եմ: Անցեալ օրերը ես առիթ
ունեցայ խօսակցելու մի օտարազգի պա-
տւական պարոնի հետ, որը մօտ երեք տարի
է Քիֆիլուսում է բնակվում: Չանազան մեզ
հետաքրքիր հարցերով զբաղվելուց յետոյ,
յոնկարծ մեր հարցը փոխվեց հայ վաճառա-
կաների բնաւորութեան վրա: Նա ասում է,
այս երեք տարեկան ընթացքում Քիֆիլիսի
հայ վաճառականների մասին այն եզրակացու-
թեան հասայ, որ նրանք չափազանց փողա-
տէր, ետանք և ժլատ են: Նրանց համար
ամեն նպատակ սրբում է դործը: Նրանք
ձգտում են ժանդարմով մետադից շատ հաւա-
քել: Բայց ի՞նչի համար, ո՞ւմ համար են
հաւաքում, շատերը իրանք էլ չը գիտեն:
Բայց տեսնե՛ք արեւօք այդ նպատակին հաս-
նելու համար վաճառականական սուրբ օրէնք-
ներով են ընթանում—ոչ երբէք, նրանց
սկզբունքն է խաբել, խաբել և միշտ խաբել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԿ ԱՆԷՔԱՆՈՒՐԱՊՈԼԻՑ

15 յուլիսի

Ներկայ ամի «Փորձ» ամսագրի IV համարում
ընթերցողը ի միջի այլոց կարդում է և մի Ալիսա-
րիայի մինչև Անի յօդուածի շարունակութիւնը
«Գեղամանց» ստորագրութեամբ: Իր յօդուածում
պ. Գեղամանցը կանգնել է ստորագրել մեր Ալեք-
սանդրասյոյ բաղադր, ի լոյս աշխարհ հանելով նրա
վիճակագրական տեղեկութիւնները (СТАТИСТИЧЕС-
КИЯ ДАННЫЯ) բաւական ընդարձակ և մանրամասն
կերպով: Չէ մոռցել պ. յօդուածագիրը, իբրև մա-
հու և կենաց խնդիր, մտնել (որպէս թէ անձամբ)
և տեղույթ թէ տեղութիւնական, թէ ազգային և թէ
այլ մասնաւոր ծիական զգրոցները, ի թիւս որոց
և մերը, ցանկալով դուրս բերել նրանցից մի ճիշդ
տեղեկութիւն նրանց ներքին և արտաքին դու-
րութեանց վերաբերութեամբ, (գեղադրաբար պ. յօ-
դուածագիր մեր զգրոցը այցելելու միջոցում, թէև
չը գիտե՞ք ինչ ժամանակ է եղել, եւ բազմ չեմ
ունեցել անձամբ ծանօթանալ պարոնի հետ և կա-
րեոր տեղեկութիւնները հաղորդել նրան, իբրև
հետաքրքիր ծանապարհորդի) բայց չը գիտե՞ք մենք
թէ պ. յօդուածագիրը ինչ հաստատուն տեղեկու-
թեանց կամ փաստերի վրա հիմնվելով մեր քա-
ղաքի զգրոցներին մի քանիսն քաղցրասիրտ զը-
թույթամբ բարձրացրել է գէպի երկինք, իսկ
միւսներն, չնայած թերութիւններն անգամ ի նկա-
տի առնելով բարեհաճել է յանդուգն դիտող
խնայանել:

Որովհետև մեր մարումը չը կայ արդէն և չէ
վերելու փաստահայ նրա—պ. Գեղամանցի—այդ-

Սրինակ, առարկան մէկ կողմիցն է, հինգ
գնահատել 50 կ. է, երկու մանէթ գնահա-
տել և այլն, և եթէ վաճառականութեան
կենտրոնատեղին Քիֆիլիսն է, ուրեմն այդ
հիւանդութեամբ վարակած են և բոլոր
հայերը:»

Որքան էլ պաշտպան հանդիսանայի արիւ-
նակները և համարելով պարոնին, ցոյց
տալի հայի բնաւորութեան շատ լաւ կող-
մերը, այնու ամենայնիւ յանդիմութիւն կը
լինէր իմ կողմից պաշտպանել Քիֆիլիսի հայ
վաճառականներին ընդհանրապէս, թէև բա-
ցառութիւններ շատ կան, քանի որ նա ան-
թիւ օրինակներ և փաստեր թափեց առաջ,
որոնց հետ ծանօթ է ամեն խանութ մըս-
նոցը: Աւելորդ չէր լինի, որ պատմեմ նոյն
օրվայ խօսակցութիւնից յետոյ իմ մի բա-
րեկամիս հետ պատահած դէպքը, որ հաս-
տատում է ծանօթ պարոնի համոզմունքը:
Նա մտնում է «Միջի-փողոցում» մի խանութ
կոշիկներ գնելու, թէև միւս խանութների
գործատուները, կամ ծառաները, «ГОСПО-
ДИНЪ, աղա, ПОЖАЛУЙТЕ» ասելով, խոստա-
նում են աւելի լաւ տալ: Աւերջապէս բե-
րում են մի զոյգ կոշիկ. «ո՞նց է գնելը»,
հարցնում է գնողը:—Նա առ է փան, 8 ռ.,
պատասխանում է տէրը:—Չէ, ախպր, մի
խօսք, չորս կը տամ, կամքդ է տուր, չէ—
էլի ձեր ապրանքն է:—Մի տես ի՞նչ ապ-
րանք է, ЧЕШТЕ СЛОВО, էս տեսակ ապրանք
չիք գտնի ուրիշ տեղ, այսպէս սխալմ է
զոյգը ապրանքը: Բայց յանկարծ 8 ռ. իջեց-
նում է և չորսով տալիս:—Բայց որ չորսով
տալու էիր, էլ ի՞նչու էիր չարչարում: օրհ-
նված հոգի, մի ասէ՛ր ու կանգնէ՛ր,
ասում է գնողը:—Կարելի է չորս ռուբլ
ասեմ, դու երկուսում զատ կանգնես, ես

դրանից վախեցայ.—Եթէ մի անգամից սո-
վորութիւն անէք գնահատել ապրանքը ինչ-
պէս հարկն է, այն ժամանակ գնողը կը
սովորի և ձեզ համար էլ սովորութիւն կը
դառնայ. այդպիսով կը պահպանէք ձեր
պատիւը: Այս ասելով կոշիկները գնում ու
հեռանում. մի ուրիշ տեղ գուլպաներ նոյն
կերպով է գնում:

Աւելի ծանծաղիւն այն է, որ իւրաքանչիւր
խանութի առաջ նստած են գործատուա-
ներ, կամ ծառաներ, որոնք իւրաքանչիւր
անցորդի համարեա ոտներն են փաթաթ-
ված: Ինչո՞ւ են իրենց խանութից բան
գնելու: Բայց մեծ մասը անգործ խանու-
թում նստած նայում է, երբեմն ապրանք-
ների, երբեմն անցորդների վրա, փոխանակ
զիրը կարգաւոր և ժամանակը նրանով անց-
կացնելու: Բայց ո՞վ է մեղաւորը, խանութի
աղաներն են, որոնք ոչ թէ ստիպում են
մատուր կեանքով զբաղվելու, այլ զիրը կար-
գացողին հայհոյելով են վաճառում: Ամեն
չար և վատ բան յառաջանում է տգիտու-
թիւնից: Արեւօք մինչև ե՞րբ այսպէս, երբ
օտարազգին ծանօթ լինելով Քիֆիլիսի հա-
յերի բնաւորութեան հետ՝ վերաբերում է
ամբողջ հայրենի: Իսկ եթէ աղանութեան
շաւղով ընթանային, այն ժամանակ, կարելի
է, վերականգնեն իրենց պատիւը օտարների
առաջ:

Քիֆիլիս.

Յ. Գ.

ՆԱԽԱԿ ԳՈՒԹԱՅԻՑ

6 օգոստոսի

Մի փոքրիկ գետակ, Գուրայ-չայ անունով, ան-
ցնելով քաղաքի միջից, բաժանում է նրան երկու
մաս. գետակի աջ կողմը բնակվում են հայերն

ТИСТИКЪ) ստորդ տեղեկանաւ, նա կը լսէր, որ
մեր այդ զարդի դասարանները ոչ թէ երկու, այլ
երեք են եղած, իւրաքանչիւրը 2 տարեկան կուր-
սով, բացի առաջին երկու տարիներից. իսկ 1877
—1879 թվերում պատերազմի ժամանակ ստիպ-
ված լինելով տեղափոխել զարդը, դասարան-
ների երրորդ սենեակը դեռ չի փոխվել վրա էր և այդ
իսկ պատճառաւ I և II պատրաստակարանները
շաւկերները զետեղված լինելով մի սենեակում, նը-
րանց դասակարգութեան թիւն ևս մի և նոյն դա-
սարանում ի հարկէ ստիպեալ, կամ յակամայիցս
չատացած, որը, կարծում ենք, որպէս մի ժամա-
նակաւոր երեւոյթ, կամ գուցէ և թերութիւն, չէր
կարող տեղիք տալ մեր հետաքրքիր ծանապարհո-
ղին այդպիսի խիտ և աններողաւոր աչքը նայել
մեր զարդի վրա, բայց կարելի է արդեօք հարց-
նել պարոնից. «ВИДѢЛЪ-ЛИ СЛОПА, КАКОВЪ СОБОЮ
НА ВЪЗЛѢДЪ...?»

Գ) Ուսուցիչներ թիւ համար պ. Գեղամանցը
ասում է, որ 2 են, բայց եթէ նա բարեմտաբար
ուշք դարձնէր իր հաղորդելի տեղեկութեանց վրա,
կամ գոնէ հարցնէր այդ մասին տեղեկ անձնե-
րից, կը գտնէր, որ մեր այդ զարդը սկսեալ իր
բացման օրից ունեցել է. առաջին տարւում 1865
—1866 թ. 1 ուսուցիչ 20 աշակերտներով, 1866
—1870 թվականը 2 ուսուցիչ 40 աշակերտներով,
1870—1875 թվականը 3 ուսուցիչ 50—60 աշա-
կերտներով, 1875—1879 թվականը 4 ուսուցիչ
60—90 աշակերտներով, իսկ այս վերջին ուսումնա-
րանական շրջանում 1879—1880 թվականը 5 ու-
սուցիչ 90—100 աշակերտներով: Այսպէս ուրեմն,
եթէ պ. յօդուածագիրը մեր քաղաքի միւս ուսում-
նարաններին վերաբերեալ տեղեկութեանց մէջ ևս
այնքան ճշգրտութիւն է պահել, որքան մեր զարդին
վերաբերեալ, փաստ, պատիւ նրան:

Գ) Կատարստիկ առարկայից թվում չը գիտե՞ք

ու թուրքերը, ձախ կողմը—հրէաները, եւս կը
ցանկանայի այս անգամ ծանօթանալ ընթերցող-
ներին Գուրայի հրէաների հետ: Նշեալ թիւով մօտ
700 տուն են: Մի երկար տախտակեայ կամուրջ
բաժանում է նրանց հայերից ու թրքերից: Մտնե-
լով հրէաների թաղը, դուք զգում էք մի չափից
դուրս անախտօք տպաւորութիւն:

Ամառուր, աղտոյի փողոցները, որոնք ամեն
մի քաղաքական գաղափարներն են բուրում,
զղուանք են ազգում ներկայ եղողին:

Փոքրիկ, ամառուր գաղափար խրճիթները, ո-
րոնք աւելի նմանում են խողի բունների, ծած-
կում են իրենց մէջ Արբանյանի այդ արժանի դա-
ւակներին: Փորձեցէք մտնել այդ խրճիթներից
մէկի մէջ, և ես հաւատացած եմ, որ դուք չէ՛ք
կարող մնալ այնտեղ ճինք րոպէից աւել: Մի
փոքրիկ խրճիթում, որի պատերից ծորում են
խոնավութեանց արտադրված կաթիլները, բնակ-
վում է հրէայի ամբողջ ընդանքը: Այդ միակ սե-
նեակը (եթէ կարելի էր սենեակ անունը տալ)
կազմում է նրա նմաբանը, սեղանատունը, հիւ-
րանոցը, խոհանոցը, արհեստանոցը, և ամենու-
նեքի արտաքինը:

Այստեղ դուք կարող էք նկատել և կեղտոյ ծե-
րունիներ միջատների հետ պատերազմ մղելիս, և
փոքրիկ, կարծես ցեխից չինած, տկար մանուկներ
ձմերուկի կեցւոյ կրծիս և երեսապարզ, կա-
նայք ու աղկկեր մարմնացած աղտոյութիւն-
ներ. այստեղ է նոյնպէս հաւը տան միջի աղբա-
նոցում իր ձագերների հետ զուգուած անկույտ ճան
մէջ անկարգ և անկանոն քրտած են տեսլիս կազ
ու կարասիքը. մի տեղ տեսնում է կերակուրի
կաթնան մի անմաքրութեան ամանի հետ, միւս
տեղ սամովարի մօտ առաւօտվանից մնում է և
բեխտայի մի այլ անմաքրութիւն. հայելու վրա փեղ-
ված է ծերունու ոտնաչուրը և հալաւը, որոնց վը-
րա արշաւանդէս են ներկայացնում միջատները
և այդ ամանի մէջ մի կողմում պատուելի տանտի-
կինը խմոր է հոնցում, երբեմն երբեմն խմորոտ
ձեռքով մարմինը քերելով: Միւս տեղ ջանք աղ-
ջկը կերակուր պատրաստում, իսկ սենեկի մէջ
նստած տանուտէրը անկողնով իր ճաշն անում:
Ճան մէջ սեղանի, աթոռի հօտն անգամ չէ երե-

արդեօք ինչ պատճառաւ կամ ինչ մտք մեր հե-
տաքրքիր ծանապարհորդը աւելադրել է օրկրա-
չափութիւնը և հանել է օրկրը, ստիպով թէ «Գլխ
աղիւսակում դրված չէր»: Եթէ պ. յօդուածագի-
րը անկողնով արտիւ նայէր իր ասած աղիւսակի
վրա, նախ՝ օրկրաչափութիւնն առարկայի տեղ
կը գտնէր օրկրը. երկրորդ՝ լաւ կը տեսնէր, որ
փոխանակ 4 դաս մայրենի լեզուի, ինչպէս ինքն
ասում է, նշանակված է կզկ աղիւսակում
պատրաստական աշակերտաց համար և օթնա-
կան դաս, իսկ I դասարանում վեց դաս, և այն
ոչ թէ վերջին ժամերում, այլ ընդհակառակն ա-
ռաւօտան առաջին ժամերում, բացի երկու օրից
պատրաստական դասարանում, ու: ստիպված ու-
սուցչաց փոփոխութեան անյարմարութիւնից, նը-
շանակված է 2-դ ժամերում 25 կարողացել
ծածկվել պ. յօդուածագրի հետախոյզ աչքերից և
այն, որ յիշեալ աղիւսակում «ԵԵԵԵ» դասի հա-
մար նշանակված է կզկ տեսնելիս ժամ օրի
մասին, ասում է պարոնը, «ես էլ այն ա-
ռանձին առարկաների կարգումն եմ: Միթէ պ.
ծանապարհորդին չէր կարելի մտածել և այս, թէ
«ԵԵԵԵ»-ն, իբրև բերանացի սովորելու և իր խօս-
քերով գրելու դաս, հարկաւոր էր անշուշտ, որ
դրա համար առանձին ժամ օրուկով յիշեցնել ա-
շակերտին թէ որ օրում և ինչ ժամում պէտք էր
պատրաստել նրան: Միթէ դրանից կարելի է մա-
շտոված է, կամ թէ, ինչպէս ինքն է ասում «ես
էլ այն առարկաների կարգումն եմ»:

Ե) Գալով վերջապէս գծագրութեան առարկա-
յին, որը մտցրել ենք մենք մեր տարրական դըպ-
րոցում իբրև առանձին առարկայ և որոշ ժամեր
ենք նշանակել նորա համար, պ. Գեղամանցը,
զարձեալ չը գիտե՞ք, որ մանկավարժական կէտից
նայելով «Ե. ք ա կ ա պ ու թ ի ու ն կ ա մ թ է չ է

ուում հրէան նստում, քնում է մերի գետնի վրա, տիպեղով իր տակ մի փոքրիկ մոթեռ կամ քնի կտոր: Յերեկով, երբ ընտանիքին պատկանող տրա- կան անդամները մանրավաճառի պարկը շարական գուրս են գալիս աղւս ինչ կ'ընեն, իրական սեռը, տանը մնալով, նստում է փողոցի դրան մէջ կամ քարձրանում է կտուրը թել մանկու և ուրիշ, մանրավաճառի վերաբերեալ, ցածր ապ- րանք պատրաստելու: Հրէայ կանայք առհասարակ շատ կուտար են լինում: Ամեն մի ժամանակ դուք փողոցում կարող էք նկատել հրէուհու կը- ուր: Այդ միջոցին նա դուռում է, որքան ոյժ ունի, փրփրում է, կատաղում է, հայհոյում է և շատ անգամ կ'ան է ընկնում իր հակառակորդի մագի- րից, որը ևս իրեն կողմից չէ ուշացնում հետեւ- լու նրա օրինակին, և այսպիսով երկու հակառա- կորդը, ինչպէս երկու կուտար աքաղաղներ, շուտով թաւալվում են փողոցի մոխրի մէջ և մի քանի րոպէից յետոյ կրկին վերկենարով մազերը ցրված, երեսները պտտառուոված, չորերը զգը- զգված, աչքերը լիքը արիւնով, կատաղաբար նա- լում են իրարու երեսին ու կրկին յարձակվում մէկ մէկու վրա, աշխատելով, որքան կարե- լի է, ձեռք ձգել իրարու աչք ու երես, և այդ տևում է մինչև այն ժամանակ, երբ նրանցից մէկը վերջապէս անկարող է դանդաղ շարունակելու պատերազմը կամ փախչում է կուռ ասպարի- դից: Յաղթողը մի արհամարհական նայուածք ձգելով իր յաղթված հակառակորդի վրա, ինքնա- բաւական հեռանում է պատերազմի դաշտից: Զարմանալի այն է, որ այդ մարդը, որոնք նըս- տած են լինում ոչ հեռու կուռ ասպարիդից, բո- լորովին ուշադրութիւն չեն դարձնում իրենց փա- փուկ սնունդ ու փափուկ մարմնամարզութեան վրա, նրանք մինչև անգամ դուրս կարող էք նկատել Յուդիթներ և Յիսթերներ, որոնք գի- ղեցկութեան տպաւորութիւնը անյայտանում է ան- մաքրութեան և աղտոտութեան տպաւորութեամբ: Կրէն և հրէուհին մի մի մարմնացած դարչահո- աւութիւն են:

Ա. Զախարեանց

ՆԱՄՈՒԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 9-ին

Մի ժամանակ հայի խնդիրն էր խորհրդածու- թեան նիւթ դարձել մեր քաղաքային վարչութեան

մեծ յիմարութիւնն է համարել, քանի որ այդ տարրական հասարակ զորագրութեան դասերը ընդունված են, որպէս ամեն մի կանոնաւոր տար- րական դպրոցներում, նոյնպէս և թէ տէրութիւ- նական և թէ ազգային միջնակարգ դպրոցների ստորին դասարաններում, իբրև տարրական հի- մունք երկրապահական արհեստին, կամ իբրև վար- ժութիւն աշակերտաց ձեռքերի և կամ կենսոյի մէջ պատահած միջոցում, գործադրելու համար, եթէ աշակերտը չը կանոնաւոր շարունակել իր ու- սումը բարձր դասարաններում: Սորանից էլ երե- ուում է պ. յոգուածագիր մանկավարժական գործի մէջ ունեցած քաջ հմտութիւնը...

Ասացինք արդէն, որ պ. յոգուածագիրը, եթէ բարեխղճաբար վերաբերվել դպրի մեր գործունէու- թիւնը և բարեհաճել հարցնել զոնէ մեր դպրոցի ներքին կենսոյի մօտ եղող անձերից մէկին, ան- չուշտ կը տեղեկանար, որ մեր այդ տարրական դպրոցը, որին նա այդքան անարգել է անխնայ, իր 16 ամսայ գոյութեան չընաւում տուել է իր հասարակութեանը աւելի քան հարիւր և քսան տարրական ուսումնարանական դարձա- ցած սաներ, որոնք իրանց մայրենի լեզուի, ուս- սերէնի և այլ կարևոր առարկայից բաւականին հիմնաւոր պաշարով մտել են թէ տեղական և թէ օտար քաղաքներում եղած արժեքի և ազգային դպրոցների 1, 2, և մինչև անգամ 3-ը դասարան- ները, այն ինչ մեր տեղական դպրոցների շատ քիչը ընդունված են եղել նոյնպիսի դպրոցներ այդչափ մայրենի և ուսուցաց լեզուի պաշարով և առարկաների գիտութեամբ: Այստեղ աւելորդ ենք համարում թուել և այն բաղմամբ սաներին, որոնք աւարտելով այս դպրոցում իրանց տարրա- կան ուսումը, մտել են կենսոյի չընաւում գործե- լու, որի մէջ և ինքնակրթութեամբ դարձանալով նորանցից շատերը եղել են թղթակիցներ պարե-

ն խորհրդարանի համար, իսկ Վերջին օրերում քաղաքին միս մատակարարելու խնդիրը: Օգոստո- սի 4-ին, պ. քաղաքագլխի առաջարկութեամբ, մի արտակարգ նիստ կայացաւ որոշելու համար, թէ ինչ միջոցների պէտք է գիծել մատակարարների դէմ, որոնք ներկայ ամսույ համար մսի վրա դրած տակաւոյով, այսինքն ֆունտը 7 կուպէկով չեն կա- մենում ծախել միսը: Յուլիսի 30-ին ձայնաւորների ներկայութեամբ դրած տակաւն հաստատուեց յետոյ, խորհրդարանը որոշեց, որ եթէ պ. Սմբատ Մովսիսեանը (որ մի մրցող է դուրս եկած չա- րամիտ մատակարարների դէմ) և նրան հետեւող մի- երկուս պարոնները ինչ և իցէ հանգամանքները ստիպված չը շարունակեն մատակարարութիւնը, այն ժամանակ քաղաքային վարչութեանը իրաւունք է տրվում միս վաճառել քաղաքայիններն անտեսա- կան եղանակով, այսինքն իր սեփական փողով հրաւի- բել մարդիկ և մի ուրիշ վարձատրութեամբ պատուի- բել նրանց ֆունտը 7 կուպէկով միս բաժանել: Պարսիկ ժամկէտին մի քանի օր, որոնք միս մարթեղուց յետ էին քաղվել և սպասում էին, թէ ինչ էլքի- կը բերի իրանց սպասարկութեան, տեսնելով, որ իրանք քաղցած պէտք է մնան, սկսեցին ամենայն առա- տութեամբ միս մարթել և այնուհետեւ ամեն ինչ սկսեց ընթանալ իր կարգով:

Ուրեմն երևում է, որ եթէ չը լինէր պ. Սմբատ Մովսիսեանը, քաղաքը, մերից գրկվելով, պէտք է ենթարկվէր մատակարարների կամաւորութեանը, նրանց կապիղիին: Այս պատճառով անկարելի է չնորհալով չը լինել պ. Մովսիսեանցից և մի և նոյն ժամանակ չը դարձանալ մեր երեսնցիները վրա, որոնք, սկզբից նախապաշարված, միշտ հե- ուում են փախչում մատակարարութիւնից ու հա- ցադրութիւնից, ամօթ համարելով իրանց կաշիւ սրանց նման կեցողութիւնը արհեստի, ԶԷ, կասեմ, երեսնցիներ, այդ բանն ամօթ չէ. այլ ամօթ է բաղադրելու շարունակ ծաղաղապիկ նստել առա- ւօտակից մինչև երեկոյ և մի մուշտարի որսալու համար ամեն մի քուսկիւն դորձ դնել. ամօթ է կապկաբար հետեւել մի քանիսին և գնալ Մօսկվա ապրանք բերելու համար, այն ինչ հին ապրանքի քաւորը մարը չէ ծախված: Բաւական է, որ ձեռք համար առնել, թէ այս ինչ մարդը Մօսկվա գնաց: Պարսիկները կամաւ խլել են մեր ձեռքից երկու ամենազգաւոր արհեստներ, այն է մատակարարու- թիւնը ու հացագործութիւնը և գրկում են մեզ, երբ կամենում են, մեր ամենօրեայ կենսական պիտոյքներից: Ինչ բարձր և վսեմ վարժունք կը լինէր այն մարդու կամ հասարակութեան կողմից, որ մրցութեամբ առաջն առնէր այդպիսի գործ- ղութիւններին: Երեսնցիները միջոց ունեն այդ բանն անելու, բայց չեն կամենում անել:

Սովի նշանակը թէ և անցան, բայց նրանց առ- պարտութիւնը մնաց մարդու յիշողութեան մէջ: Այս պատճառով մեր այժմեան նահանգապետը, նահանգի ժողովուրդը սովից ազատ պահելու հա-

րական հրատարակութիւններին: Գուցէ և սորանց վրա է, որ դարձանում է ինքը պ. յոգուածագիրը! (Տես Էփորձի № IV. Երես 75. յօդ. Ժ.)

Քիչ չէ զարմացնում մեզ և այն թէ պ. յոգուա- ծագիրը ինչ արդեւ հարկից կամ համոզմունքից ստիպված իր յօդուածի դէպքի մեջ վերաբերեալ հատուածում, յանկարծ չեղկվելով իր բարեկա- րակ գործի ընթացքից, սկսում է կնքել մեր ճա- կատը զուգակալութիւն և այլ մի քանի անվայել խօս- լերի զրոյմով մի քանի Եւրոպականների և Ֆրանսի- ների հետ, հրաւիրելով միանգամայն մեղադրեալ վրա մեր ժողովրդական արժեքն ուսումնարան- ների պ. վերաբաւելի ուշադրութիւնը, որպէս զի չը թողարկվի մեզ պէս Եւրոպականներին, կիրա- կուին և Ֆրանսիայում, ժողովով մեզ մօտ բաղմա- թիւն խեղճ մանուկներին և նորանց քաւոր ու ա- պէս անհատական և կարծել թէ ԵԱ ս- տուած ոչ չէ եղած մատուցան ուսման Այն ինչ պ. յոգուածագիրը իր հաւուածով միւս երեսում 1) ծանօթութեան մէջ, եր. 68, խոր- հուրդ է տալիս իրենի թնի վերաբերել օգնա- կան պ. Պեռնանցին, որ մեր քաղաքի միւս ծխա- կան դպրոցները, որոնց անունները մի առ մի թուել է նա իր ստատիստիկայում, չենթարկվել մանկավարժական խիստ քննութեան, այլ շատանալ աւուում է, փոքր ինչ կարգ ու կանոնի տակ բե- րելով նորանց: Միթէ մենք ևս, իբրև հայ, իրա- ւունք չունենք արժանանալու մի այդպիսի քաղ- ջըր անխաղճութեան յոգուածագիր պարոնի կող- մից:

Բայց թող միամիտ լինի մեր ստատիստիկոս պ. Գեղամեանցը, որ մեր թէ նախկին և թէ այժ- մեան մեծապատիւ պ. տեսուչներին վաղուց ար- դէն յայտնի լինելով մեր ուսուցչական գործու- նեցութեան արդիւնները, մի և նոյն ժամանակ տեղական մանուկներին յարմար և օգտաւէտ լինելը,

մար, մտածել է մի գեղեցիկ միտք և, ինչպէս լը- սում ենք, սկսել է արդէն իրագործել այն: Այդ միտքը գիւղերում ցորենի շտեմարաններ շինելն է: Ինչպէս լսվում է, գիւղական ամեն մի ընտանի- քից կաշիքի ժամանակ պէտք է ստացվի ցորենի մի որոշեալ քանակութիւն և յանձնվի գիւղում գտնվող մի ամբարում պահելու համար: Հետեւա- տարում ամբարանոցի ցորենը գիւղացիները բա- ժանում են իրանց մէջ և ստացած բաժնի կրկնա- պատկը տալիս են նոր ցորենից և այսպէս շա- րունակաբար է լինում, գիցուք, մի տաս տարի: Անկարծիք, մի 10 տարուց յետոյ 100 տանից բաղ- կացած մի գիւղ կունենին այդպիսով մի մեծ ամ- բար, որ հարկաւոր դէպքում կարող է իրենի գիւ- ղականին մահից իսկ եթէ ենթարկեցը, որ մի 10 տարուց ընթացքում ոչինչ անակնկալ փորձանք չը պատահի, այն ժամանակ գիւղական հասարա- կութիւնը կարող է ամբարի ցորենը մասամբ վաճառել և ստացած փողը դորձ դնել բարեկա- րակ գործերի վրա: Պ. Նահանգապետի միտքը, որի իրագործման համար ամբողջ ևս եղել ուղար- կված գաւառի գիւղերը, մի քանի տեղ չինական- ների կողմից դարձանալով թերահաւատութեամբ է ընդունվել, որովհետեւ կարծել են, թէ ցորենի հաւաքելը մի տեսակ հարկ է տեղութեան կողմից, որ մի այլ միջոցով ծանրաբեռնվում է իրանց վրա: Կարծում ենք, որ պ. Նահանգապետը առաջին փորձերից չի վստահ և կը շարունակի իր բարի գործը երկրի բարօրութեան համար:

Հետաքրքիր լուրեր կան հարկաւոր, որոնք թողնում են հետեւեալ նամակի համար:

Յովհաննէս-Հեթում

ՆԱՄՈՒԿ ՄՈՒՆԻԿԱՆԻՑ

Օգոստոսի 9-ին

Թիֆլիսի բնակիչը Մանգիլիում յօդարկութեամբ նուիրելով Թիֆլիսի Հայաստանի հայազգի սո- վատնայինի համար հարկւր տասն և եօթը բուրի (117 ռ.), սրա հետ ուղարկում են ահա ձեռք այդ գումարը, ինչպիսով ուղարկել ուր հարկն է: Նուիրատուը սղաւ են:

Սարգիս Բաժանդարեանց 5 ռ., Ս. Ս. Աւգու- նեանց 6 ռ., Ն. Հայկազեանց 6 ռ., Սարգիս Տէր- Սարգսեանց 3 ռ., Իվան Հաւուսեանց 3 ռ., Պետրոս Մակարով 5 ռ., Հայ ունի 1 ռ., Ի- վան Բաղատուրով վրացի 3 ռ., Սերգէի և Սե- տոն Գալուսեանց 1 ռ., Սերգէի Մեղվիսեանց 2 ռ., Յովհաննէս Խոզազեանց 1 ռ., Աղեք- սանդր Տէր-Շմաւոնեանց 3 ռ., Ա. Ն. 1 ռ., Ուսուցիչ ունի 1 ռ., Իվան Մինէի Հարկարով 1 ռ., Ստեփան Մեղվիսի 5 ռ., Երից- փոխեանց 1 ռ., Ստեփան Խանկալանով 1 ռ., Ս. Արշէլով 1 ռ., Մ. Միլովով 2 ռ., Վ. Կուսիկեանց

բաղմից արժանացրել են մեզ իրանց խրախուսա- կան շնորհակալեացը. նոյնպէս և մեր տեղական յարգող հասարակութիւնը իրօք տեսնելով իր որ- ղոց այդ աստիճան դարգացումը թէ ուսման և թէ բարոյականութեան մէջ, միշտ յարգանք և հաւատարմութեամբ վերաբերվել է և վերաբերվում է դէպքի մեր գործունէութիւնը և դպրոցը, ուր համարեա միշտ խնդրանք և ստիպանք անգամ տեղաւորացնում է իր զաւակներին:

Այս, իրաւամբ դարձանում ենք մենք, թէ պ. յոգուածագիրը ինչ հարկից ստիպված ամենայն ցանք գործ է գրել իր յօդուածում մեր գործու- նեցութիւնը սկսեցնելու քանի որ նա, իբրև խղճի տէր, միանգամայն և բաւական դարգացած մարդ, կարող էր, եթէ իրօք մի թերութիւն նշմարել էր մեր դպրոցի վրա, որ այդ ամենայն մի մասկա- նացուի ձեռնարկութեան մէջ կարող է նշմարվել, իր բարի և օգտաւէտ խրատներով և խորհուրդ- ներով օգնել մեր տկարութեանը և մենք ամենայն պատրաստակամութեամբ և սիրով կը փութայինք մեր թերութիւնները լրացնել, որքան մեր միջոց- ները և ընդունակութիւնը կը ներկին: Եւ այդ մեզ ոչինչ ստորութիւն չէլինք համարել և ամե- որպէս ամբողջ մարդկութիւնը, նոյնպէս և ամե- նայն մի անհատ հետզհետէ աճելու և զօրանալու վրա է: Բանի որ այսօրվան աշակերտը մի քանի ժամանակից յետոյ դարձանալով ուսուցիչը դա- նում: Բանի որ այսօրվան մի գեւախակ ուսուցիչը մի քանի տարուց յետոյ դանազան փորձերից խրատված համարեա մի բաւականին հմուտ իր նուիրական արհեստում վարժապետ է դառնում: Բանի որ մի օր և իցե աստիճանաւոր կամ վա- ճառական, կամ քարտուղար և կամ մինչև ան- դամ ստորին գործակաւոր և իր բարեբարաց դէմ ապկարայտ գտնվող անձն, հետզհետէ դարձանա- լով կենսից գործունէութեան մէջ, կարող է քա-

1 ռ., Արսէն Միրզաեանց 5 ռ., Յակոբ Միլիւհան 2 ռ., Սերգէի Մարգարով 1 ռ., Ալեքսի Տէր-Մի- րզաեանց 1 ռ. 50 Կ., Եւգոր Եղիշաբեանց 3 ռ., Ստեփան Գիւղուրարով 1 ռ., Վասիլ Սեանեանց 1 ռ., Արտեմ Նարինեանց 3 ռ., Աւետիք Գարա- շեանց 1 ռ., Գրիգոր Կոպաճէ (վրացի) 1 ռ., Կոս- տանդին Խիզանեանց 3 ռ., Թաթևոս Տէր-Յովհե- փեանց 2 ռ., Աննախանում Տէր-Վաղարեանց 5 ռ., Նինոյ Տէր-Վաղարեանց 3 ռ., Իվան Եակովլէվիչ- Քամոնով 1 ռ., Ալեքսանդր Մեղիք-Փաշայեանց 2 ռ., Միլիանով 2 ռ., Եւգոր Միրզաի 3 ռ., Խրիստա- փոր Գաւրիսեանց 5 ռ., Ալեքսանդր Ավրով 1 ռ., Խրիստափոր Գաւրիսեանց 2 ռ., Կորնալ Բա- չիւրեւ-Մեղիքով 1 ռ., Զաքար Արշէլով 1 ռ., Անյայտ ունի 1 ռ., Ալեքսանդր Նարինեանց 3 ռ., Յովսէփ Տէր-Սարգսեանց 3 ռ., Արտեմ Սեա- նեանց 3 ռ., Սարգիս Զահանայ Տէր-Գրիգորեանց 50 Կ., Տէր-Յակոբ Զահանայ Մահարեանց 2 ռ.: Ընդամենը 117 ռ.:

Խաչատուր Աւգանեանց

ՆԱՄՈՒԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 յուլիսի

Զեր ազգօգուտ լրագրի անցեալ տարուայ թեր- թերից մէկը մէջ հրատարակեցաւ, որ մի քանի հայ երիտասարդներ ձեռնարկել են հայերէն և հայերին վերաբերեալ օտար լեզուներով գրքերի հասարակաց մի գրադարան բանալու: Եւ յիշաւ՝ մենք Թիֆլիսի Բէյալիան ուսումնարանի մի քանի աշակերտներս այդ բանին ձեռնարկեցինք, բայց ստիպված լինելով զանազան կողմեր ցրուել և չունենալով յարմար և հաստատ տեղաբնակ մի դեկավար՝ մենք մեծ յաջողութիւն չունեցանք մեր ձեռնարկութեան մէջ: Իսկ այժմ գործը իր յար- մար և գործունէայ դեկավարը գտել է. մեծ. պ. Յովհաննէս Կուսիկեանը, տեղույս Բէյալիան ու- սումնարանի ուսուցիչը, ազգասիրտ և յիշաւ՝ մեր ձեռնարկի շարունակութիւնը յանձն առաւ, այլ և գրադարանի յարկի ու գրադարանապետի հոգն ևս իր վրա առաւ: Ուստի մենք մեր գոր- ծունէութեան արդիւնքն ու հաշիւը յիշեալ պա- րտին յանձնելով պարտք ենք համարում մեզ նոյնը և հրապարակաւ մեր յարգելի նուիրատունե- րին տալ:

Հաշիւ. ձեռամբ օր: Տէր-Մարկոսեանցի, պ. պ. Ռոտմենեանցի (Թիֆլիսում), Պիճիկեանի, Պապի- նեանի, Չիլիշաբեանի (Ախալքալաքում) և Կամ- սարականի (Երևանում) հաւաքվել են ընդամենը 304 կտոր գիրք և 117 ռ. փող:

Գրքեր նուիրող պարոններից մեծագոյն մասը տորադրած չը լինելով իրանց անունները, մեծք զրանց հաշիւը յանուանէ չենք կարող հրատարա- կել այստեղ. իսկ փող նուիրողներն են Թիֆլի-

զաղաղիսի և կամ մի այլ բարձր պաշտօնի կոչ- մանք արժանանալ և այլն, և այլն, և ոչ թէ, ինչ- պէս ասում է առաւոր Եօնքը յինչու. տեղ, աչքն էլ հանէր:

Այդ իսկ պատճառաւ մենք էլ չը ցանկալով միանգամայն անցկենալ համեստութեան սահմա- նից, փտահանում ենք խոնարհաբար խորհուրդ տալ յիշեալ պ. յոգուածագիրին, որ այսուհետեւ իր գրքերի ներսում յօդուածներում, ինչ առարկայի առաջ հետաւում լինի, կամ լաւ ուշք դարձնէ իրողու- թեանց ճշգրտութեան վրա և ապա ըստ այնմ նկա- տողութեան կամ քննութեան առնի նորանց, և ոչ թէ ռմանց անհիմն և մինչև անգամ կարող ենք ասել, նախանձուտ սրտից փրժած անխնամ չաղա- կրատութեանց վրա հիմնվելով, թող տայ իր զգը- չին ազատութեան իր ազգակից կողմը սիրտը փրա- ւորելու և կամ նրա պատիւը և անունը արտա- ւորելու, որ պարոնին մեծ պատիւ չէր բերի: Որ- պէս զի՝ Կրիսովեան այն առակը, որ նա մեզ ա- լելի անպատեւելու համար իր յօդուածում իբր օրի- նակ յառաջ է բերել, նոյն իսկ իր զիւրին չը կա- տարվի:

Վերջացնելով նամակս, մեծապատիւ խմբագիր, խոնարհաբար խնդրում եմ, որ ի տէր արդարու- թեան, բարեհաճէք մի փոքրիկ անկիւն շնորհելու սորան ձեր պատուական և անկողմնասէր լրագրի առաջիկայ թերթերից մէկում, որպէս զի մեր նա- խանձու փողույ ներքեւ (գուցէ յանգեալ) ճշմար- տութիւնը երեսն եղելով մեր անունը ի դուր և անմեղ տեղ շարատարովի, որպէս մեր մեծերի, նոյնպէս և մեր բարեմիտ հասարակութեան ա- առաջ:

Աղէքսանդր Արթուրեանց

սում. (Օր. Տէր Մարկոսեանի ձեռամբ հաւաքված) 35 կոպ., մի ֆունտը 5 Կ., իւրը 20 Կ., ձուր 8 հատը 5 կոպ., հաւի մի հատը 15 կոպ., փայտի սամէնը 4 րուբ., ածուխի սայլը 1 ր. 20 կոպ.:

Մեղ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ որ քաղաքից մի քանի վերստ հեռավորութեամբ, Դերէնդի ձաւնապարհի վրա, աւազակները կողոպտել են երկու հայ փաճառականի, որոնցից մէկի մօտ, ինչպէս աւսում են, գտնվելիս է եղել մինչև 7000 րուբ. Նոյն տեղից հաղորդում են, թէ չը նայելով, որ մասնատականների ծովապահութեան և քաղաքապետութեան օրենք են, կոխը, աղմուկը և սպանութիւնը համարեա ամեն օր պահատ չեն լինում քաղաքի թիւրքերի միջից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻԻՐԻՔԻԱ

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են հետևեալը:

Թիւրքաց կառավարական «Osmanli» նոր լրագիրը, որ «Թէրքմանի»—Հակիկաթի» շէրանսերէն թարգմանութիւնը կարելի է համարել յայտնեց նորերում, որ Բ. Կրան և Չերնոգորայի մէջ համաձայնութիւն կը կայանայ, որովհետեւ փոխարքա յարգանք կայ քաջ չերնոգորցիներէ և թիւրքերի մէջ, որոնք սովորեցին միմեանց գնահատել պատահական դաշտերի վրա, մինչդեռ թիւրքերը չեն կարող յարգել պարծենկոտ յոյներին, որոնք միշտ ուրիշներէն են օգնութիւն սպասում և մեծարում են կարողութեաններին, շրանսիացիներին և այլ ազգերին: Պաշտօնական լրագիրը ասում է, որ Կուլցի-նիօյի նահանգի մի մասի զինվոր Չերնոգորայի կարելի է կատարված համարել, մանաւանդ որ պաշտօնները այլ ևս չեն ընդգիծմանում: Ինչ կը վերաբերի նահանգի միւս մասին, լրագիր կարծիքով բանակցութիւններէն յետոյ անպատճառ համաձայնութիւն կը կայանայ, որովհետեւ Բ. Կրան առանց վիճարանութիւնների և բանակցութիւնների չէ կարող ընդունել պետութիւնների երկու առաջարկութիւնից մէկը: Անդադար առևտուրը և վիճարանութիւնը թիւրքերի ժառանգական պահապանութիւնն է և Արեւդիւն-փաշա ամենից շատ ենթարկված է այդ պահապանութեան: Այնուամենայնիւ նա ցանկացաւ հեշտացնել իր գործը և դիմեց վեց պետութիւնների ղեկավարներին, խնդրելով ընտրել իրանցից մէկին բանակցութիւնները շարունակելու համար: Շատերը զարմացան թիւրքաց լրագրի-նրի հաղորդած լուրի պատճառով, որ Բ. Կրան, իրեն Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւն, կը մասնակցի ծովային ցոյցերին պաշտօններին վախճանելու նպատակով: Ինչպէս երևում է, այդ միտքը թիւրքերին չէ պատկանում, այլ այդ բանը ներշնչել է թիւրքաց կառավարութեանը պ. Կոչեն Կլաքսոնի պաշտօնական հրամանի համեմատ: Անգլիական առաջին միջնորդը մտածել է, որ լաւ է ծովային ցոյցին մասնակցի անել թիւրքային, որովհետեւ այդպիսով պաշտօնները անբաժանելի կը մնան Բ. Կրանից: Այժմ այդ բոլոր դիտաւորութիւնները, ինչպէս յայտնի է, յետաձգված են: Այժմ երբ Բ. Կրանը մտադիր է վերջ դնել չերնոգորական հարցին, նրա վրա շատ վատ տրւալարութիւն գործեց այն լուրը, իբր թէ պաշտօնական միութիւնը կազմված է սուլթանին դահլիճէն անելու և թիւրքերից իշխանութիւնը խլելու նպատակով:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Փարիզից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը:

Ներկայումս հանգստութիւն է տրուում մասամբ այն պատճառով, որ ամենքը սպասում են սկսված ձեռնարկութիւնների հե-

տևանքներին և մասամբ, որ դիպլոմատիան հանգստանում է, որովհետեւ սկսվել են ամառային արձակուրդները: Բ. Կրանը վճռել է երկու չարիքներից ամենափոքրը ընտրել և Կուլցի-նիօյ յանձնել Չերնոգորային: Թիւրքաց զորքերը, որոնք Բիզա-փաշայի հրամանատարութեան տակ ուղարկվում են Սկուտարի, նպատակ ունեն պահպանել Բ. Կրան հեղիւնակութիւնը: Մի քանի նշաններից երևում է, որ պաշտօնները այժմ աւելի զինվորներ կանեն: Փարիզում ոչ ոք չէ ծածկում, որ այդ բոլոր մասամբ կը վնասի յունական գործին: Բ. Կրանը կը կենտրոնացնի իր բոլոր զորքերը և գործ կը դնի իր բոլոր միջոցները մինչև վերջին շունչը Նանիկա, Մետոօօ և Լաթիսա պաշտպանելու համար: Նրանի այդ պաշտպանութիւնը յամառ կը լինի և երկար կը տևի: Թիւրքերը մտածել անգամ չեն կարող եւրոպային զինաւորված ուժով ընդդիմանալու մասին: Նրանք զիպլոմատիական խորամանկութիւն են անում ժամանակը երկարացնելու համար, որպէս զի պետութիւնների մէջ անհամաձայնութիւն պատահի և այդ անհամաձայնութիւնից, նրանք օգուտ քաղեն: Եւրոպան պէտք է հեռացնել անհամաձայնութեան բոլոր առիթները, կիթ նա համաձայնութեամբ կը գործէ, սուլթանը զինվորներ կանէ: Բ. Կրանը կարելի է այնպէս պաշարել, որ նրա համբերութիւնը կը հատնեն. կը կամենայ արդեօք Թիւրքիան սուլթանի լինել: Կարելի է Բ. Կրանը պաշտօնապէս յայտնել ծովային ցոյցերի մասին և այդ հանգամանքը կը ստիպէ նրան Յունաստանին զինվորներ անել: Եւրոպան այդպէս էլ կանի: Իսկապէս ոչ մի պետութիւն չէ մտածում ոչ առանձնացած գործունէութեան և ոչ հեռանալու մասին: Մի քանի չափազանց վախկոտ ձայներ Ֆրանսիայի մէջ հարցնց հետո ևս մնում և ցանկանում են, որ Ֆրանսիան չը կատարէ կարծիքով Ֆրանսիացիք արտաքին գործերով չափազանց շատ են զբաղվում: Այնուամենայնիւ այդ գործերից մի քանիսը յարաբերութիւն ունեն Ֆրանսիայի շահերի հետ: Այդ պատճառով Ֆրանսիան իրաւունք ունի և պարտական է այդ ուղղութեամբ գործել: Այժմիկ հանգստութիւնը պահանջում է, որ Ֆրանսիական կառավարութիւնը Տունիսից աչք չը հեռացնէ: Ներկայումս և Սիրիայի մէջ նա պէտք է ազդեցութիւն ունենայ: Արեւելեան հարցերը միմեանց հետ ամուր կապված են: Այդ պատճառով Ֆրանսիան պէտք է շարունակ կատարէ մեծ պետութեան դերը և նա ոչինչ վտանգի չի ենթարկվի: Նրա խառնվելը գործի մէջ միակողմանի չէ: Նա չէ կամենում բաց անել արեւելեան հարցը, այլ ընդհանրապէս կամենում է ծածկել նրան Բերլինի դաշնագրով:

«Daily News» լրագրի հոգով թղթակիցը գրում է. այստեղ ստացված լուրերից երևում է, որ Բ. Կրանը արաբներով չէ առանձին զինվորներ անել Կուլցի-նիօյի հարցի մէջ: Սոքոտոսի 24-ին լրանում է պետութիւններից Բ. Կրանը ստանալ երեք շաբաթվա ժամանակափոխոցը և կիթ Բ. Կրանը զինվոր չի անի, պետութիւնները ստիպված կը լինեն զիմել ծովային ցոյցին:

«Էյտերի ընկերութեան» հեռագրում են Կ. Պոլսից, որ օգոստոսի 11-ին աւստրիական նոր ղեկավար բարոն Կայից ներկայացաւ սուլթանին և յանձնեց նրան իր հաւատարմութիւնը: Կեպտանը մի փոքրիկ ծառով ցանկութիւն յայտնեց սուլթանի հաւատարմութիւնը ստանալու համար, որովհետեւ միայն այդ ծառայարհով կարելի կը լինի կատարել իր յանձնարարութիւնը, որի նպատակն է աւելի ամրացնել թիւրքաց և աւստրիական կառավարութիւնների մէջ եղած բարեկամութիւնը: Նոր ղեկավարը սուլթանի օտ ձաշի հրաւիրվեցաւ:

Մակեդոնիայի մէջ պատրաստվող անցքերի մասին «Polit. Corresp.» լրագրին Սալոնիկից գրում են: Առհասարակ Բալկանեան թերակղզու վրա պատրաստութիւնները սկսվում են զարնանք, երբ սարերը կանաչում են: Այս տարի գոնէ Մակեդոնիայի մէջ այդ կանոնից մենք բացառութիւն ենք տեսնում: Այդ նահանգի մէջ այս տարի զարուշը և խոնգարվեցաւ հրացանաձգութիւններով և գործը միայն ուշ ամառը կը սկսվի, երբ Յունաստանը ձեռք կը տայ իր վիճակված նահանգների գրաւելուն:

ՄԵՍԿԻ ԳԵՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի: «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ հրամայված է չորրորդ բաժինը անուանել Քաղաքի սեփական կանցիլարիա Քաղաքի Մարիայի հիմնարկութիւնների համար:

Կ. ՊՈԼԻՍ, 13 օգոստոսի: Կեսպանները յայտնեցին Բ. Կրանը, որ կիթ Կուլցի-նիօյ յանձնելը անպարտ չի կատարվի, նուաւորմենի ցոյցը անփախչելի կը լինի: Ահմետ-էյիւբ-փաշա Ահմեդ-Մուխտար-փաշայի տեղ Մոնաստիրի նահանգապետ է նշանակված:

Նիժնի-Նովոգորոդ, 14 օգոստոսի: Ռուսաստանի մէջ հինգ տարի ապրող Կոստիկ Կալիկին խան Նար-Էլին աղատութիւն ստացաւ օգոստոսի 12-ին: Ուղևորվում է Տաշկենտ: Երեկ նա հասաւ Նիժնի: Այսօր ուղևորվում է Կ. Պոլս:

Կ. ՊՈԼԻՍ, 14 օգոստոսի: Հաստատ ասում են, որ այսօր կը յանձնվի Եւրոպայի միաձայն պատասխանը թիւրքաց շրջաբերականին յունական խնդրի վերաբերութեամբ:

ԲՍՄԲԵՅ, 14 օգոստոսի: Գեներալ Սալկարտ հրաման ստացաւ կանգնել Ջալալբադի մէջ Կարուշի կրիտիկական դրութեան պատճառով: Արդարաւանք զորքերը սկսում են հեռանալ նրանից: Եյուբ-խանի կուսակցութիւնը մեծ ցոյց արաւ յօգուտ էյիւբի:

ՇԱՄԱՆ, 14 օգոստոսի: Կեյտաի խանի զորքերը ապստամբվեցին: Բրիտանական զօրաբաժինը ուղևորվում է Կանին օգնելու համար:

ԲԵՐԼԻՆ, 14 օգոստոսի: Առևտրական մի-նիստութեան կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնված է իշխան Բիւնարկին: Հօգման պաշտօնից արձակված է:

Կ. ՊՈԼԻՍ, 14 օգոստոսի: Այսօր կոմիտէից ներկայացրեց Բ. Կրանը պետութիւնների միաձայն պատասխանը թիւրքաց շրջաբերականին յունական խնդրի վերաբերութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի: «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է. Կովկասեան բաժնի կամիտի գործերի կառավարիչ Օստրովկով վերադարձաւ արձակուրդից և սկսեց իր պաշտօնավարութիւնը: Մանուրով ստատեկրետար և միջնորդների կոմիտեի գործերի կառավարիչ է նշանակված: Սիւր-կովկասեան ստատսկի սովետնիկի ատտիճան է տուած և ներքին գործերի միջնորդի կանցիլարիայի կառավարիչ է նշանակված:

ՎԼԱԴԻՎԱՍՏՈՎ, 15 օգոստոսի: Այսօր հասաւ այստեղ կրկեսի ժողովուրդը և կրկեսի ծի-գիտը, սպասում են և ուրիշ նուէրներ:

ԲԱՒՈՒՋԱ, 15 օգոստոսի: Բիզա-փաշա հասաւ Սկուտարի մէջ Ալբանական միութեան առաջնորդներին: Առաջնորդները, չը համոզվեցին: Բիզա-փաշա կամենում էր նրանց կալանաւորել. բայց բնակիչների արգելիցին, սպառնալով սպանել Բիզա-փաշային: Կուլցի-նիօյ բնակիչները վճռել են այրել քաղաքը, կիթ ստիպված լինեն զինվ նրան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 օգոստոսի: «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Կաղաւոր Կայսրը Ֆարսի Սելայից ուղևորվեցաւ Լիվադիա:

ՎԵՆԵՆԱ, 18 օգոստոսի: Ռուսաստանի Կայսրը աւստրիական Ֆրանց-Ֆրիցի կայսրին շնորհեց ուղանքի գուշի շնորհի աստիճան:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐԲՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՏՆՈՒՆՑՆԻ

12-ին այս օգոստոս ամսի, առաջին սա-
հաթին զինի ծաշին ետգոր Գրիգորիչ Յա-
րութինեանցի մաղաղինի առաջը յանդէպ
ներքեի քարվանսարային Արծրունց, զտա-
գերահասակ աշակերտ նրա Սեդրակ Պետրո-
սեանց, մի բուսմանիկ զանազան վէքսիներով
60 րուբլի, քաղկականներով 300 րուբլի, ու-
րիշ մի վճարած վերսի 1085 րուբլի և այլ
քաղկականներ թուով 43 հատ, նմանապէս
մարկայք և պատրաստի փող 73 րուբլ. սրա
կորցնողն հրապարակում է յիշեալ ծառութիւնովի
մաղաղինի ապացուցութիւններով նրան պատ-
կանելութեան աշխատանքի քուսմանիկի,
փան ստանալով:

3—3

ՆԵՐՍԱՍ ՄԵԼԻՔԵՆԻ

ՄԱՍՆԱՌՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԵՐ

Թիֆլիսի-Կուկիայում Ալեքսե-
յանի փողոցի վերայ Ռոստոմ
Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին
նորեկները քննութիւնները և ըն-
դունելութիւն. ուսումնարանն ըն-
դունելու է գիշերօթիկ և կիսա-
թոշակ աշակերտներ:

5—6 (2)

Այս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի
և Կարապետ Բէլախեանցի մասնաւոր ու-
սումնարանում կը սկսուին նորեկ աշակերտ-
ները ընդունելութիւն: Ուսումնարանը պահ-
պանում է գիշերօթիկ և ընդունում կիսա-
թոշակ աշակերտներ, պատրաստելով նրանց
ձմեռանոց քաղաքի դպրոցներէ առա-
ջին և երկրորդ դաստանց համար:

4—6

Շուտով լոյս կը տեսնէ ԳԱՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ
ՁԱՅՆԱԳՐՈՒՄ Ժողովրդական գործածական եր-
գերի

Երկրորդ անգամ և Կարապետ Բէլախեանցի

Ձայնագրութիւն և հրատարակութիւն
Յովհաննէս Սուքանաձեանցի, և կը պա-
րունակէ իւր մէջ վից երգեր:

- 1) Ազնիւ ընկեր մեռաւում եմ
- 2) Ահնայիչ անձայն
- 3) Բաժանիկն առնուեք, եղբարք
- 4) Մեր հայրենիք, թշուառ անտէր
- 5) Հայոց աղջիկներ և
- 6) Հայրենիք Սրբազան

Երկրորդ անգամի զինը լինելու է մի
րուբլի. ցանկացողները ստանալ զաշխատելի
համար ձայնալրած երգերի առաջին անտ-
րակը, որ պարունակում է իւր մէջ չորս
երգեր: 1) «Անի քաղաք», 2) «Ենձ համար»,
չէ. 3) Յուրաք վիշեց» և 4) «Ծիծեռնակ»
պէտք է ուղարկեն մի րուբլի. առաջ անելի
գնորդներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր
ԵՐԳԱՐԱՆ ՅՐԵՅԻՆԻ, որի մէջ պարունակ-
վում են 50 հատ ընտիր նոր հրատարակ-
ված երգեր: Դիւր 30 կոպէկ: Ցանկացողները
ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Յրէյ-
տունի նոր երգարանը, պէտք է ուղարկեն
մէկ րուբլի և 30 կոպէկ. հետեւալ հասցեով:
Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузана-
джянцъ На Петхайнской ул. собствен-
ный домъ № 13.

Գայանեան և Ներսէսեան դպրոցների ուսու-
ցիչ պ. Վարձեկեանը իւր գերազանցող մէջ
ընդունում է միայն ՁՈՐՍ գիշերօթիկ աշակեր-
տուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբա-
գրութեանը:

4—5

Մի երիտասարդ, որ զիտէ հաշուա-
պահութիւն, կամենում է տեղ ունենալ կա-
րող է և Գործակալ տարի կամ կան-
աւոր շէնքի կը պաշտօն կատարել. հասցէն
թողնել «Մշակի» խմբագրատանը:

2—5

ՁԱՆՁՈՒՂԱԶՈՂԻ ՄԵՐ ՄԱՂԱՋԻՆՈՒՄ շա-
րունակվում է վերջական վաճառումն ամեն
օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէ-
սօրի, թէ բախում և թէ մաղաղինում:

4—4

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախ-
վում է 225 րուբլով վարա գոյրն եր շի-
նելու մի ՄԵՔԵՆԱՅ: Մախողը յանձն է առ-
նում նրա գործադրութեան մասին սովորեց-
նել առնողին:

Դիմել Յովսէփ ՄԱՍԿԵՐՊԱՆԻՆ, Մուխա-
նակի փողոց, Սոլլատակի բաղարի անկիւն
Դամբարովի տանը, № 8.

3—5

ԲԺՇԿԱՆՈՅ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԶՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԵՐ ԱՌԱ-
ԽՈՏԱՆ 9-ԻՑ ՄԻՆՁԵՒ 1 ԺԱՄԱՐ:

Երկուշաբթի. Գալօս սկի կանանց
հիւանդ. Գորակ վիշ ներքին հ., Բոտի-
նեանց կանանց և երեխաների հ., Բիւշա-
րեանց խորագրական և աշքերի հ.,
Շտեմբօրսկի վիշերական և կաշու հ.,
Բաբայեան ջրային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Միշկի վիշ խորագր-
ական հ., Գորակ վիշերական և բողա-
ղի հ., Բէյլի աշքի հ., Բախումով
մանկաբարձական, կանանց և երեխաների հ.,
Կրասնօգլիսի և գոլ, Լիսիցի վիշ և Կի-
միշկի ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցի վիշ և Բուշ-
կի վիշ ներքին հ., Շտեմբօրսկի
կիշերական և կաշու հ., Աստուածատու-
րով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վ. Գորակ վիշերական և
բողաղի հ., Բոտինեանց կանանց և երե-
խաների հ., Լիսիցի վիշ և Կիմիշկի
ներքին հ., Բիւշարեանց սիֆիլիսի և
սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալօս սկի կանանց հ.,
Միշկի վիշ խորագրական հ., Կրասնօ-
գլիսի և գոլ և Լիսիցի վիշ ներքին հ., Բա-
խումով մանկաբարձական, կանանց և ե-
րեխաների հ., Շտեմբօրսկի և Աստ-
վածատուրով վիշերական և կաշու հ.,
Բաբայեան ջրային և ներքին հ.:

Տարեթ Լիսիցի վիշ և Կիմիշկի
ներքին հ., Բաբայեան կործքի հ., Շտեմբօ-
րսկի վիշերական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. Գորակ բժշկանցի
մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդ-
ներին ամենայն օր երկուշաբթի 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայեան չորեքշաբթի օրերը ա-
ռաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդու-
նում է իւր տանը բժշկանցի հիւանդներին
էջկորիական բժշկութեան և ներքին հ.
համար: Բնակարանը գտնվում է Սերգիև-
կայա փողոցի վրա, Բալանդուրովի տանը:

Ատամնարոյժ Օրբիկ տաղքատ հիւան-
դներին բժշկանցի տամնարոյ ընդունում է
ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
ւօտեան 9—11 ժամը բժշկանցի լինում է
մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու
համար:

Բժշկանցի գիրկտօր Լիսիցի վիշ:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2.
ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանցի և ծախ-
վում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԵՐՀԵՐՈՒԹԵԱՆ ձեռ-
նարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԵՆՍԵԱՆՑԻ:
Ե. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրե հայերենագիտութեան դա-
սերի օրինակ տրուած է Թիֆլիզի հայերենագիտութիւնը),
հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.
Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ
պատկերներով, գինն է 60 կոպ.
գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ
է Գ. ՏԱՐԻՆ մասը բաղադրական:

19—20

Ալեքսանդրապօլու երկեսու դպրոցաց բարձր դաս-
տանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան
համար ուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի
որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:
Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել
երկեսու դպրոցների հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց.
 { Ասատուր Իսահակեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանգիսի ներկայ
ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի
բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային
պատկեր, յորոց ութն նկարուած և փորագրուած են յատուկ մեր
հանգիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան
վարդապետ, Այվազեան աքը եպիսկոպոս, Միքայէլ Միանաւարեանց,
Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին,
Արձարան Հայոց ի Կարին, Սովեալ Հայ ընտանիք ի Վան, Վան
քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրեայ Նորին Կայսերա-
կան Մեծութեան ի Կաթողիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն
ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են
այսուհետեւ իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տիֆլիսում ստանալ կարելի է պ. Օ. Գրիգորեանցի և Կենդ-
րոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Չարմայր Մ. Մսերեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ
ԵՒ
ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննու-
թիւնները և նորեկների ընդունելու
թիւերը տրայոց և օրորդաց 4—15
տարեկան հասակը:

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱ-
ՑՈՒՆԻՈՒ ԵՒ ՊԱՆՈՒՅՈՒՄ ԿԵՆԴՐՈՒՆԵՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԱՇՈՒ-
ԿԵՐՏԵՐԵ:

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱՅԱՑԱ ՊԵՏԿԱՆԵԱՆ
ՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱՅԵՐ, որտեղ
կարելի կը լինի ստանալ ԿԱՅԵ, ՇՕԿՈՒԱԿ,
ԹԵՑ և պատրաստված հանրային զանազան
ըրեր:

35—40

Թիֆլիսի ՊՐՈԳՐԵՍԻՎԱՅԻՆ ՎԵՐՁԱՅՐԱՆ
Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարանի-
րում 8 ՏԱՐԻ դասախօսութիւնն արած մի
ԵՐԵՍԱՍԱՐԻ ներկայ սեպտեմբերի 1-ից ցան-
կանում է ՈՒՍՈՒՑՅՈՒ ՊԱՇՏՈՆ ստանալ բա-
ցառապէս ՈՒՍՈՒՑ լեզուից և ԹՈՒՍԱՐԱՆՈՒ-
ԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դա-
ւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ
Էնթիանցեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՆԵՐՈՒՄ:

13—22

ԱՆԳԼԵԱԿԱՆ ԹԱՆՈՒԹԻՒՆ մէջ ստացվել է
մեծ քանակութեամբ ԹԵՑ ուղղակի թէյ, ի-
զորմանից, նոյնպէս ՏԵՐԱՎ ՄԱԿԱՆԵՅԻՆ
ծարաւութեան զէմ և կարրօրտն ՓՈՒՆ և
ՀԵՂՈՒԿ տարախիտիկ հիւանդութիւնների
զէմ:

3—10